

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Պուլկարիոյ համար


Տարեկան Ծրք 10

Վեցամսեայ » 5

ԿԱՆԽԻՆ

20

ՍԱՆԳԻՄ



ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆ

Արտասահման

Տարեկան Ծրք 12

Վեցամսեայ » 6

ԿԱՆԽԻՆ

20

ՍԱՆԳԻՄ

ՀԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵՇՏԱԿԱՆ

Կը հրատարակուի ճաքար օրերը: Ծա-
նուցման տողը 10 Մանկիմ: Երկու քիւ ա-
ռաջ հրատարակուած քերքը 40 Մանկիմ:
Չհրատարակուած գրութիւնը եւ յօդուի:

Հասցե
DIREN PAPAZIAN
RUE DRAGOMAN K. STEPAN
(BULGARIE) VARNNA

ԱԶԳԱՅԻՆ

— 0 —

Տիար Կ. Յովասափեան իր ծանօթ
մարդասիրութեամբը անցեալ օր դի-
մում ըրած էր տեղւոյ թաղապետ Մ.
Ժէքովի, որպէս զի Կ. Պոլիս վերադա-
նող չքաւոր դաղթականաց զիւրութիւն
մը ընծայուի Պուլկարական շողենաւային
ընկերութեան կողմէ, կարեւոր զեղչ մը
կատարուելով տոմսակներու գնոյն վրայ:

Այժմ՝ գոհութեամբ կը ծանուցա-
նենք թէ յարգելի թաղապետը Տիար
Յովասափեանի խնդրանքը նկատողու-
թեան առնելով, հաճած է բանակցու-
թեան մտնել յիշեալ ընկերութեան
հետ, և որոշուեր է որ վկայեալ չքաւոր
դասակարգը կէս գինով փոխադրուի ի
Կ. Պոլիս, պայմանաւ որ ատոնք Տիար
Յովասափեանի գիմելով իրենց չքաւոր
ըլլալն հաստատող վկայական մը ըստա-
նան և անով ներկայանան շողենաւային
ընկերութեան:

Այս լուրը ուրախութիւն կը պատ-
ճառէ մեզ, որովհետեւ մեկնելիք թըշ-
ուառները պիտի կրնան քիչ մը աւելի

զոհ սրտով վեշադառնալ իրենց բնա-
վայերը եւ օրհնել միշտ իրենց բարե-
բարները:

” ”

Կը լսենք նոյ պէս թէ, Պատուելի
Ամիրխանեանց ալ սկսած է նոյն կարգի
չքաւոր ճամբորդաց մինչև շողենաւ առ-
հիւսիսեան եղած ծախքերնին մասաւր
հոգալ, իւրաքանչիւր ճամբորդի յանձ-
նելով երկերկու ֆրանք:

ԵՐԿՈՒ ՏԳԵՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Պուլկարիոյ հայաչառ քաղաքներէ
մէկէն նամակ մը ստացանք, որուն հե-
ղինակը ցաւելով կը հաղորդէ տարօրի-
նակ լուր մը, որ իր աննշան հանգա-
մաքովն իսկ կարծէ լուրջ նկատողութեան
առնել, նկատելով որ նոր ապացոյց մը
կը բերէ անիկայ այն ցաւալի խտրու-
թեան, զոր դժբախտաբար ուրեք ու-
րեք կը ցուցուին համարիւն համացեղ
եղբարց մէջ:

Փետրվար 13 ուրբաթ իրիկուն
Տեառընդառաջի նախատօնակին առթիւ

նոյն քաղաքի եկեղեցւոյն մէջ ըստ հընաւանդ սովորութեան, «լուսաւորեալ» մոմ չըջաբերուած պահօնն, ժամկոչը, անշուշտ առած հրամանի մը վրայ, կը զլանայ տալ այդ մոմերէն գաղթական հաւատալիներու, որոնք բազմութեան երեւ յորտրդ մասը կը կազմէին գրեթէ տեղացիներու ցանցաւ թիւը միայն կարժատնանայ այդ մեծ շնորհին:

Եթէ այս լուրը ստոյգ է.— և պատճառ մը չունի ստոյգ չըլլալու,— կուգայ ա՛գամ մը ևս հաստատել այն ճշմարտութիւնը, զոր «Հայելի»ի 45րդ թիւին մէջ մատնանիշ ըրած էինք Սիմէոն զաւկաւոր վերնագրով մեր առաջնորդողին մէջ: Ի՞նչ կը նշանակէ այս խտրութիւնը, որ այսպիսի չնչին առիթներու մէջ իսկ երեւան կը բերուի հանգէպ թշուառ գաղթականներու, այսպէս նորանոր ցաւեր ու խոցեր բանալով անոնց արդէն խորտակուած ու փշրուած սրտերուն վրայ:

Փափաքելի է որ, գոնէ Թաղ. Խորհուրդներու պէս պաշտօնական մարմինները աչալուրջ ըլլան այս մասին եւ փոխանակ այդ խտրականութեան ոգին անճեցնելու տեղացիին ու գաղթականին մէջ, ջանան զօրացնել ու ամրապնդել ազգային այն սերտ կապերը, որոնք կը միացնեն ամբողջ հայութիւնը Լուսաւորչի եկեղեցիին սրբազան հովանիին տակ:

Ուրիշ քաղաքէ մըն ալ մեզ կը հաղորդուի նոյնքա՛յ ցաւալի լուր մը, որ կարի գայթակղական է:

Այս անգամ օրինակը մեր գաղթական կարգ մը ծանծաղամիտներէն կուգայ. այս թեթևասլիկ պարոնները կիրակէ և տօն օրեր բառտէսսիւն թեւերնուն և պատտօնը ձեռքերնուն կախած՝ թատրոն գացողի պէս կոտորտուելով եւ օրորուելով եկեղեցի կերթան ու հոն, սրբազան արարողութեանց միջոցին դասին մէջ քո՛վաւի կեցած, առիթ չեն փախցնել վերնատունը գտնուող կիները

ըն ու աղջիկները դիտելէ: Ահա լրբութեան ու սրիկայութեան ծայրագոյն պարագայ մը, զոր որակելու համար չենք յիշեր բառ մը հայկադեան բառարանին մէջ: Եկեղեցւոյն դասը՝ անյիշատակ ժամանակներէ ՚ի վեր սահմանուած է եկեղեցականաց և դպրաց. հոն աշխարհական անհատ մը իրաւունք չունի կենալ եթէ այս օրէնքը անծանօթ է մեր ծանծաղամիտներուն, գոնէ մեր տէրպապաները յիշեցնելու են զայն ժողովուրդին, որով մէկ անգամէն վերջացած կըլլան այսպիսի գայթակղալից դէպքեր:

Աւելորդ կը համարինք ծանրանալ այս երկու ցաւալի ու յաւէտ դատապարտելի իրողութեանց վրայ. ու եթէ այսչափ գրեցինք, պատճառը այն է որ կ'ուզէինք պայծառ օրինակ մը ևս ցոյց տալ մեր անկեղծութեան և անկողմնակալութեան մասին, որով միշտ կը հարուածենք ու պիտի հարուածենք ամենինչ որ տգեղ է ու նողկալի:

Ցաւելով իմացանք թէ Ռուստուգի մեր բարեկամներէն Տիար Ն. Քէստանեան դատարէտ կորուստ մը ունեցեր է յանձին իւր հինգ տարեկան Ազնիւ անուն դստեր, որ փողատապէ կը տառապէր:

Մեր անկեղծ ցաւակցութիւնը կը յայտնենք Քէստանեան ընտանեաց:

ԲՈԺՈԺԻԿԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

Ուրբաթ առաւօտ Գ. Բոժոժիկ կանու խէն խմբագրատուն գալով, լուրջ դէմքով մը գրասեղանին առջև նստաւ ու ձեռքը ձակտին կրթնցուցած սկսաւ մտածել:

— Ի՞նչ է ան Բոժոժիկ, նորէն ի՞նչ ունիս:

— Հանգիստ ձգէ զիս տէր իմ, լուրջ ուսումնասիրութեան մը պիտի ձեռնարկեմ, որ շատ պիտի հետաքրքրէ «Հայելի»ի ընթերցողները:

— Ի՞նչ տեսակ ուսումնասիրութիւն է այդ:

— Տէր իմ, ինքնակերպարանափոխութիւններս պիտի գրեմ և հրատարակեմ:

— Ինքնակերպարանափոխութիւններդ մի՛ կարծեմ ինքնակենսագրութիւն ըսել կ'ուզես:

— Հա՛հ, հիմա գլխուն զարկիր, ես ալ այդ չարածձի բառը կը բնտուէի, ուրեմն սկսիմ. ահա վերնագիրս, «Յիշատակարան Բոթոժիկեան»:

— Բոթոժիկ, տղայ ես ի՞նչ ես, չէ՞նէ այս առտու խելքիդ է փչեր:

— Ընդհակառակը, տէր իմ, անգամ մը դէմքիս լրջութիւնը դիտեցէք և յետոյ այդպէս վճռեցէք: Այս յիշատակարանիս մէջ պիտի երևին ամբողջ կեանքիս հետաքրքրական պարագաները, որոնք մեծ շահեկանութիւն և այժմէութիւն պիտի ունենան գրական հրապարակին վրայ:

— Բայց դուն մինչև հիմա ի՞նչ ըրած ես որ ելեր ինքնակենսագրութիւն, յիշատակարան ըսելով իրար ես անցեր:

— Ճանձըմ, չէ՞ մի որ ես ամեն ծակ ու ծուկ կը մտնեմ, պատերուն տակ կը կըծկիմ, գլխարկներու և վարագոյրներու տակ կը պահուեցիմ, առաստաղներու վրայ կը թառիմ, վայրկեանի մը մէջ ամբողջ աշխարհներ կը շրջագայիմ, ես որ միշտ շարժումի մէջ եմ, չի՞ վայրեր որ այս բոլոր քաջագործութիւններս և հրաշագործութիւններս յիշատակարանի մը մէջ ամփոփեմ, որպէս զի աշխարհ գողայ և սարսի, ահաբեկի և սահմուկի:

— Ինչե՛ր կըլլաս կոր Բոթոժիկ, ինչե՛ր կըլլաս կոր:

— Այո՛, սարսի և ահաբեկի:

— Բայց մտիկ ըլէ, կենսագրութիւնը մարդուս մահուանէն վերջը կը գրեն, կամ եթէ կենդանութեանը գրեն, մահուանէ վերջը կը հրատարակեն:

— Ատանկ բաները պարիթ են հիմա, նորութիւն պէտք է մեղի, նորութիւն:

— Աղէկ կ'ըսես ամա, սիրելի Բոթոժիկ, այս կերպով գաղտնիքներդ երևան պիտի ելլեն և ալ առաջուան պէս չպիտի կրնաս արծակ համարձակ ամեն տեղ մուտ գտնել և կարեւոր տեղեկութիւններ հաւաքել:

— Չգէ որ այդ ըսածդ այնքան կարեւորութիւն չունի, քանի որ մենք տակաւին վարժուած չենք ամեն բան շուտ մը հասկընալ. բայց առոր ալ ճարը կայ. ես այս յի-

շատակարանը կը գրեմ ու քեզի կը յանձնեմ, դուն առանց իմ բուն անունս երևան հանելու, իբրև թէ արտասահմանեան բարեկամի մը քով գտած կըլլաս զայն. յետոյ, ազգարարութիւն մը կ'ընես և յիշատակարանիս մեծութիւնը կը շեշտես, անունս ալ կը փոխես, Բոթոժիկին տեղ Զանգակով կամ Զընկուտագով կը դնես, ու լեզուն ալ քիչ մը կը փոխես. ալ որի՞ն բերնին է մնացեր որ Բոթոժիկի յիշատակարանը եղած ըլլալը հասկընայ:

— Էյ, կեցցես ուրեմն Բոթոժիկ, աս գիւտդ գլուխ գործոցդ է:

— Ուրեմն սկսիմ, «Ես ծնվել եմ 146 թուականին, նախ բան ՂԲՐԻՍՏՈՍ, և...

— Ո՛ւր ծնելդ չե՞ս գրեր Բոթոժիկ:

— Գործիս չի գար:

— Ինչո՞ւ:

— Այն ատեն Բոթոժիկ ըլլալս կը հասկցուի, հէմ այդչափ բարակին նայողը ո՞վ է, բոլոր յիշատակարան գրողները անանկ կ'ընեն կոր:

— Ատանկ յիշատակարան չըլլար. կենսագրութիւն ըսածդ պէտք է ամեն բան մանրամասնօրեն պարունակէ իր բաշագործութիւններուն հետ պակասութիւններն ալ կամ սխալներն ալ հրապարակէ:

— Հասկցայ, 40 տարին հեղ մը բան մը ընելու ելանք, անոր ալ դուն արգելք կըլլաս կոր. ուրեմն այս յիշատակարանս նոր հրատարակուելիք Գաղարում լրագրին կը տանիմ որ սիրայօժար պիտի տպագրէ ու քեզ պզտիկ պիտի ձգէ:

Այս ըսելէ ետքը, Բոթոժիկ տրձակ մը թուղթ շալկեց և ինքդինքը պատուհանէն դուրս նետեց:

Վէսէլօ Թատերախումբը վաղը գիշեր վերջին անգամ ըլլալով պիտի ներկայացնէ «Լէպլէպիճի Հօրհօր» առան օբճրագօմիգը, սրուն փայլունութեանը համար ծախք և ջտնք խնայուած չէ:

ՃԱԿԱՏԱԳՐԻՆ ՄԱՏԵԱՆԸ

(Շար. եւ վերջ:)

— Ներեցէք տէր իմ, ձեզ ներկայա-
նալ համարձակելու համար, կրսէ վաշխա-
ռուն, թանկագին բան մ'ունիմ, զոր ար-
ժան համարեցայ ձեր վսեմութեան նուիրել,
գիտնալով որ հազուագիւտ և գեղեցիկ ա-
ռարկայները սիրելու ընտիր ճաշակ մը ունիք:

— Տեսնենք, ստահակ, ի՞նչ է այդ
բերածդ.

— Ահ տէր իմ, գրաւ կը գնեմ թէ՛
պիտի սքանչանաք, որովհետեւ տիեզերքին
գաղտնիքները պիտի գիտնաք. . . ստուգիւ
անգին բան մ'է, զոր զիպուածն իմ ձեռքս
անցուց. վերջապէս՝ ճակատագրին մատնանն
է.

— Արի՛կայ, թերեւս կատակ ընել կուզես.

— Այ տէր իմ, և ներեցէ՛ք, մինակ
իւր տեսքը աչքերը կը շլացնէ:

— Եւ կրսես թէ բոլոր պատահելիք-
ները տառու մէջ կը կարգացուի.

— Եւ ոչ իսկ եղելութիւն մը ի բաց
թողուած չէ.

— Էհ, նայինք ի՞նչ կուզես.

— Հազար ֆրանք, որ այնչափ մեծ
գումար մը չէ. . . կ'երգնում թէ մինակ
կողքին համար այդչափ վճարած եմ, իսկ
պարունակութիւնը դին չունի:

Սակարկութիւնը կը լմնայ եւ վաշ-
խառուն 1000 ֆրանքն առած ուրախու-
թեամբ կը մեկնի:

— Աղէկ հանգիպում, կրսէ պարոնը
մտովի, ես այս օրերս պիտի ամուսնանամ,
ուստի ապագայս կանխու հասկնալու եմ,
նշանածս վրաս կը խնդենայ, աղւոր է,
սիրուն է, պղտիկ է, ես ալ մեծահարուստ
մէկն եմ, բարեձեւ, հաճոյալի գիւծը, թէ և
ՏԱՐԻՔՈՏ, ուստի ապագայն անշուշտ ինձ
երջանկութիւն պիտի աղդարարէ:

Եւ հապճեպով մատնանը թղթատելէ
ետքը հետեւեալը կը գտնէ.

«Ամուսնանալէդ խանի մը քսարի ետ-
քի կիկնդ սիրահարներ պիտի ունենայ,

— Լի՛րբ պատգամ՝ դու, կը պոռայ,
բարկութեամբ աքացի հարուած մը իջեցնե-
լով գրքին, ևւ ծառաները կանչելով՝ կը
յարէ, — վազեցէ՛ք, դա հրեայն բռնեցէք,
100 գաւաղան զարկէք ոտքերուն և ապա սա
ճակատագրին մատնանն ալ կրակը նետեցէք:

Ծառայք գիրքը կը տանին, այլ իրենց-
մէ մէկը կրսէ.

— Ընկերք, փոխանակ այրելու, եկէք
վաճառենք սա գիրքը.

— Աղէկ կրսես աղայ, ծախսենք:

Եւ անմիջապէս շարլաթանի մը կը
յանձնեն ճակատագրին մատնանը շիշ մը
դինիին փոխարէն:

Շարլաթանը կրսէ իւրովի, «այս մար-
դոց ամենքն ալ ապուշ են, իսկ ես՝ հարս-
տութեան աղբիւրը գտայ:

Եւ ապուշները իրեն կանչող փողով մը
կազդարարէր ամբոխին թէ՛ ինքը ապագան
կը գուշակէ, թե իւր, արուեստովն իրիկուը-
նէ մինչեւ առաւօտ ուղողը կրնայ իւր ճա-
կատագիրն իմանալ:

Ամեն մարդ շարլաթանին քով կը վազէ,
և շերկարենք, բիշ տտենէն՝ շնորհիւ իւր
յուզութիւն անբաւ հարստութիւն կը դիպէ:
Այս սարօքինակ գիտութեան վրայ ամեն-
մարդ յապուշ կը թեալ՝ կամաց կամաց իրմէ
կը զարհուրին ըսելով թէ՛ կախարդ մ'է սա,
եւ քանի որ ամեն բան կը գիտնայ՝ սատանին
գործակից է, թուշուաւականին մէկն է, հե-
տեւաբար այդ արուեստին համար պէտք է
շինքը պատժել:

Շարլաթանը կուհեւելով որ խերը պիտի
անիծուի՝ կծիկը կը դնէ մատնանը թեւին
տակն առած. բայց ճակատագիրը ծանր է և
մեր մարդուն փախչելու համար ունեցած
փափաքին արգելք կը լլայ. ուստի խրճթի մը
մէջ առանձնացեալ ծերունւոյ մը քով ձգել
կորոշէ զայն:

— Հայր իմ, կրսէ մատնանը ներկա-
յելով. ընդունեցէք սա ընծայս, ճակատա-

գիրն է, զոր ձգդ կը թողում. . . յոյժ թան-
կագին գիրք մ'է բայց հեռու տեղ մը եր-
թալ ստիպելէս՝ վտանգաւոր է զայն հետս
առնիլ, հետեւաբար քուքովդ ձգել որոշեցի:

Եւ կը հետանայ:

Մինչդեռ երկրի վրայ այս դէպքը տե-
ղի կունենար, մենք դարձեալ յերկինս աս-
տուծոց մօտ երթանք:

Ամեն բան շարժման մէջ է շանթերու
տիրոջ քով, իրախճանաց հետեւեալ օրն Ա-
րամազդ իւր մեծ մտանքը կը բնութէ «Չար-
մանալի» բան, կըսէ, ես հետս տաի զայն,
բայց ուր է, ի՞նչպէս պիտի ապրինք. . .
օ՛ն Հէրմէս, չուտ բրէ, վազէ՛, ճակատա-
գիրս ինծի պէտք է, հիմա անմիջապէս վար,
յերկիր իջնելու ես, որովհետեւ գլորած հոն
ինկած ըլլալու է. զայն վերստին ձեռք բե-
րելու համար ամեն միջոց գործածելու ես,
առատ առատ խոստացիր, ետքը՝ գրքին մէջ
կը նայինք, եթէ գրուած է՝ խոտուածնիս կը
կատարենք:

Հէրմէս ճամբայ կենէ, աշխարհիս չորս
կողմը խուզարկելէ ետքը մեր մենակեաց
խեղճ ծերուկին քով կը դանէ ճակատագրին
մատնանք:

— Հայր իմ, այդ գիրքն ինձ յանձ-
նելու ես, կըսէ շնորհալի եղանակաւ. . . աս-
տուծոց կը վերաբերի՝ այդ, ըստ որում՝ ճա-
կատագրոց լեզուն կը պարունակէ:

— Ա՛հ, կըսէ իմաստուն ծերունին ժըպ-
տելով, առէք ուրեմն, մինչեւ իսկ չի կար-
գացի:

— Ի՞նչ կըսէք. իրա՞նչ չի կարգացիր:

— Եւ ոչ իսկ երես մը:

— Բայց ի՞նչ պատճառաւ:

— Վասն զի. . . եթէ կարգացած ըլ-
լայի՝ այժմ՝ հանգիստ քնանալս պիտի տես-
նէիք:

— Եւ ասոր փոխարէն ի՞նչ կուզէք,

— Ոչինչ:

— Ոչինչ մի՛:

— Այո, ոչինչ. . . և յօժարակամ ձեզ
կը թողում զայն:

— Յօժարակամ՝ . . . և ինչո՞ւ:

— Որովհետեւ ապագայն գիտնալու
ձիրքը մահանացուացս համար մահառիթ-
արուեստ մ'է, ուստի ներկայն վայելենք,
պահենք այն յիշատակը որ մեզ ցնծութեան
մէջ ժամանակնիս կը յիշեցնէ. իսկ փնայեալ
բաներուն վրայ գոցենք աչքերնիս. ահա այս
է կարծեմ երջանիկ լինելու միջոցը:

— Ո՛հ. մեծ իմաստուն մ'էք դուք:

— Ես ծեր եմ և այս գիրքը իիծի
համար կուտ մը չարժէր. առէք զայն և վե-
րադարձէք յերկինս:

Ծերունին կը ննջէ վերստին, իսկ Հեր-
մէս կը թռի դէպի վեր:

Թարգ. Լ.

ԲՕԼ ՏԸ ՔՕՔ

Մ Ե Կ Ն Ո Ւ Մ

Անցեալ կիրակի օրը Վառնաէն Կ. Պո-
լիս մեկնեցան 98 երկսեռ գաղթականներ.
այս պատճառաւ 1000է աւելի հետաքրքիր-
ներու բազմութիւն մը հաւաքուած էր նա-
ւամատոյցին վրայ, ու թէեւ օդը բաց և ա-
րևոտ էր, բայց այն աստիճան ցուրտ քամի
մը կը փչէր որ ամենուն բթին ծայրը կաս
կարմիր կտրած, նաւամատոյցին երկայնքը կը
չափէին՝ տաքնալու համար:

— Դեղդիկ հանրմ, դո՞ւք ալ կեր-
թաք կոր:

— Խայիր, տալոջս ներոջը ալջիկը կը
ղրկենք կոր. անիկա մէյ մը թող երթայ
աղէկ մը եւելէշմիշ ըլլայ տէ, դալ շաբթու
ալ մենք կերթանք:

— Մենք ալ մէքթուպի մը կը պէքլէ-
յենք կոր քի ճամբայ ելլանք:

— Քեարերնիս սա եղաւ քի, Վառնա
մը եկած տեսած եղանք:

” ”

— Քա Մաղթիկ հանրմ, տը, տը, տը,
աս ի՞նչ ալ գէշ հով մը կը փչէ կոր, տը,
տը, տը:

— Սուս եղիր բուրուկ, չիվի կը կըյ-
րենք կոր:

— Յուրաք երեսս լլեց, տը, տը, տը, արե կայ ըսելով խաբուեցայ, տը, տը, տը, տակէն ֆանէլա միսս չի հագայ:

— Ձեզսս իչ աղըսիի հանգպիս, խը-րատ տուող չեմ՝ ամա, շիտակ տուն գնա:

— Էղաւ ըլլալիք, արթըն պաֆօռին էլլալն ալ տեսնամ տէ անանկ կերթամ, տը, տը, տը:

” ”

— Միւսիւ Որդիք, առանց նամակի չի ձգես մեզի. ինծի գրելիք յատուկ նամակդ ձեր տանտիրոջ Եուզանին անունին գրէ ու Ղազարոս հօրեղբայրիս կողմէ հայրիկիս ղըր-կուելիք նամակին մէջը դիր. ես՝ հայրիկիս ձեռքէն կառնեմ, «Տանտիրոջ կնկանը կը տանիմ՝ կուտամ», ըսելով գաղտուկ մը կը կարգամ ու պատասխանն ալ հօրեղբայրիս ղըրկելիք նամակնուս մէջ դնելով ճամբայ կը հանեմ:

— Ո՛հ, գիւտդ սիրեմ՝ Թերեղաս, այդ շատ աղւոր պիտի ըլլայ:

— Արդեօք նորէն զիրար պիտի տես-նա՞նք կըսես:

— Ինչո՞ւ չէ, պիժոռս, քանի որ մէկ ամիսէն դուք ալ պիտի վերադառնաք:

— Միւսիցն սերը պիտի շարունակենք:

— Անտարակոյս. միթէ Թուրքաէն վե-րադարձած ատեննիս մեր սրտերը չուխտե-ցի՞ն յաւիտեան զիրար սիրել. նոյնը կը կըրկ-նեմ հիմա ալ սա նաւամատոյցին վրայ, ուրկէ պիտի բաժնուիմ:

— Քիթդ բերանդ ինչո՞ւ շալին մէջ բաթտեր ես:

— Որովհետեւ նոր անիլուեցայ, մա-ղերս կտրտել տուի, կը վախնամ որ պող կառնեմ ու հարբուխ կըլլամ:

— Հիմա քիչ մը օլտուն գա շալը մեկ-դի ըրէ որ մէյ մըն ալ երեսդ տեսնամ:

— Շատ աղէկ, հոգիս:

— Ի՞նչ աղւոր վայելք է դեմքիդ ֆե-սը, քեթի պ դարձեր ես:

— Միթէ շաբաթն չէ՞ր վայլած.

— Բէք աղւոր վայլած էր, բեզի հա-

մար շաբաթ եղեր ֆէս եղեր, ի՞նչ ալ գնես նէ կը վայլեցնես:

— Քու աչքիդ անանկ է երեցեր:

— Ան չէ ամա, թուշիդ վրայի պամպ թելդ ի՞նչ ըրիր:

— Անոր ալ մնամ՝ յարգանք ըսի:

” ”

— Վա՛յ, Ղարապիթ աղա, սե՞ն տէ մի կիտէօրսըն:

— Պու կիւնիւն էօյլէ պիր նիյէթի-միդ եօխ տըր. հէլէ պունլար սէլամէթ վար-սընլար սա, պիզ տէ կէլէն հաֆթա կիտե-րիդ:

— Էյի եաբարսըն, էօյլէ իսէ տաեա՞ն Ղարապիթ աղա:

— Ղա՛րտաշ, պիր պուչուլի սէնէ տիր էյի տաեանտըն, նէչէյէ՞ տէխ պուլտա ղա-լաճաղ:

— Գօլունտան թութան վա՛ր, մը բար, գալգըպ կիտէյիտին:

— Էյի տէյօն Օվանիս աղա ըմմա, ը-րընտըմտաքի եօխլամայը կօրտիւն մի, իշթէ օ տըր պէնի խօրիսուտան, եօխսա շիմտիյէ ղատար չօխտա՞ն տայանմը ըտըդ օրայա:

— Տէ տաեա՞ն պագալըմ Ղարապիթ աղա:

— Ղա՛րտաշ, սէն տէ տաիմա իշախըր էլտէն պըխարթմազսըն:

— Շագա նէ՞ օլաճագ, պէն սանտ պուլտա գալ տէմէյօրըմ, պիլաքիս՝ պիր սա-աթ էվվէլ կիթմէք իչիւն տաեա՞ն Ղարա-պիթ աղա տէյօրըմ:

— Վէսսէլամ... կէնէ սէօյլէյօն:

— Ձիւնքի իշիթտիք քի կէչէն հաֆթա պիր թագըմ բուճ չօճուգլարընտան տաեագ ենմիշսին, եէնիտէն մարաղայա թութու-մայասըն տէյու գալգ կիթ, տաեա՞ն Ղա-րապիթ աղա տէյօրըմ:

— Պիզ օ իշի սուլֆա եաթըրտըն:

— Բէք էյի էթմիշսինըդ. անճագ, ճանըմ Ղարապիթ աղա, խաթըրըմ իչիւն, շու իշի պիր տէֆա տէ սէն նագլ էթ:

— Ղարտաշ, տիւքեանտա այրելը 3-400 տանէ խառար չիւրիւք վէ պօշ ճէվիզ վար բար, շիմտի բէհրիզ տիր, շու ճէվիզէրի սիւրէլիմ տէյէրէն՝ ախշամ ուսպահ տիւքեանըն էօնիւնտէն կէչէն մէրթէպ չօճուգլարընտան պիր թագըմընը չըղըրտըն, եիրմի պէշ ճէվիզի օն բարայա վէրիյօրըգ տէյուպ չօճուկլարը զանտըրտըն, 200 թանէ գատար սաթտըն. ախշամ իւսթիւ պուկլար պիր սիւրիւ իւզէրիմն ղէլտիլէր, պէն տէ օ արա տիւքեանըն ղաթօյընտա պիր իշ իլէ մէշղուլըտըմ, հէմէն իւզէրիմէ հուճուլմ էտիպ պէնի պաշլատըլար տէօվմէյէ.

— Նի՞չիւն.

— Չիւնքիւ ճէվիզէր հէբ պօշ չըլտըն:

— Սէն տէ էօյլէ մալը սիւրմէմէլի իտին,

— Պիր շէյ քի օլտու. ճիվիզէր կիպի պիղտէ օ արա պօշ պուկլունտուկ:

— Սօնրա նէ՞ եաբտըն.

— Քէնտիմի կուճ հալ իլէ ղաթօյ խաբուսընա աթտըմ:

— Տէ՛ տաեա՛ն Ղարապիթ աղա, եաբայը գուրթար պագայըմ:

— Օ կիւնիւ ղուրթարտըն, էրթէսի կիւն եինէ ղէլտիլէր. պաթտըն չարէմիզ տիւքէնտի, իշի բարայա եաթըրտըն, օն բարալըն ճէվիզ ալանա՝ գըրգ բարա սուլֆ բայը վէրտիւ:

— Սէն պէլայը բէնտին սաթըն ալմըշտըն. «Ագըլըրզ պաշ էլինտէն նէ՞ չէքէր սէֆիլ այագ» տէմիշէր:

— Էօյլէ օլտու. իշթէ պու կիպի պէլալարտան ղուրթուլմագ իչիւն արթըն տուրմայըպ կէտէճէմ:

— Էօյլէ իսէ տաեա՛ն Ղարապիթ աղա:

Զեկոյց Բոժոժիկեան

Առ օր. Ե... Էնսթիւթուիւս տիբլօմէ, բօսթ ըէսթան ի Վառնա — Դադրեցուցէք ձեր նամակները, որովհետեւ որու որ զանոնք կը ղրկէք, այժմ ի Կ. Պոլիս քաֆէ ֆլումը նստած կը զբօսնու:

Առ օր. Էնսթիւթուիւս սան տիբլօմէ Ն.

— Ինքնիրենդ հարս ես եղեր, բայց երազած փեսացուդ ան տեղուանը մարդ չէ եղեր: «Կէօնիւլ ղէվզէք տիր, ումարի թըքա-կան առածը կը յիշեցնես: Խելօք կեցիր:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԻՐԱԿԱՆ ԴԷՊՅԵՐ

Ա.


ՓԻԼԻԿ ԱՂԲՕՐ ՀԱՐՍՆԻՔԸ

Բ.

ԹԱՊԱՔԵԱՐ ՎԱՐԺԱՊԵՏԸ

Գ.

ԱԿՆՑԻՆ



ԳՐԵՑ

ՏԻՐԱՆ Գ. ՓԱՓԱՋԵԱՆ

Ա. Զ. Դ.

Ընթերցասէրներու փափագին համաձայն սոյն երեք ծիծաղաշարժ գէպքերու հաւաքածոն, որ աւելի քան 200 էջերէ պիտի բաղկանայ, արդէն մամուլոյ յանձնուած ըլլալով, բաժանորդագրութիւն մը բացուած է: Գինն է 1½ ֆրանք: Հրատարակութիւնը ամբողջապէս ետքը պիտի վաճառի 2 ֆրանքի:

Այս առթիւ շրջաբերութեան հանուած բաժնետոմսը յառաջիկայ Մայիս 1 ին Վառնաի մէջ «Հայելի» խումբագրութեան, իսկ գաւառները անոր Պատր գործակալներուն ներկայացնողը պիտի ստանայ սոյն գրքէն մէկ օրինակ կազմեալ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԴՐԱՏՈՒՆ

Ա. Զարպհանէլեան

ՎԱՌՆԱ

Կը վաճառէ Պոլիսի, Թիֆլիսի եւ Վիեննայի մէջ հրատարակուած հայերէն գլխոցական եւ պատմական գիրքեր, գնումն եւ վաճառումն ամեն տեսակ նամակագրոյնքով։ Նաեւ գլխոցական պիտոյքներ։ Քաղաքներէ եկած յանձնարարութիւնք վուծով կը կատարուին 8



ԳԿԻՇԱԿ
Ա. Պ. Ա. Գ. Ա. Յ. Ի
կամ Զուարճարի Բաղդասար
ընտանեկան

Երկսեւ ամէն հասակի ընթերցողաց զբօսարի ժամանցներ տուող սոյն գիրքը կը ծախուի մէկ ֆրանքի, թղթատարի ծախքով, գինը մեր խմբագրութեան։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐ ԿՈՒԹԻՒՆ

ԵՐԳԱՐԱՆ

ՄԱՆԿԱՊԱՐՏԵՋԻ

ԿԱՄ

ԴԱՍԱԳԻՐԲ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՊԷՏՍ

ՓՈՐՐԻԿ ՏՂԱՅՈՅ

Այս երգարանը, իր տեսակին մէջ առաջինն է որ լոյս կը տեսնէ հայերէն լեզուով, կը պարունակէ մանկական գուարճարի երգեր ու քանի մը ոտանաւոր առակներ եւ կրնայ երախայներուն ծառայել նաեւ իբր ընթերցանութեան գիրք որուն պարունակութիւնը երօսեցուցիչ եւ հրահանգիչ է միանգամայն անոնց համար։

Թուղթը ընտիր է, տպագրութիւնը՝ մաքուր եւ կազմը վայելուչ։

Գին 80 ՍԱՆԹԻՄ

Կեդրոն. Վառնա, Արեւելեան տպարան,
Ձրդ. թաղ, թիւ 1104։

Տ Պ Ա Ր Ա Ն

ՀԱՅԵԼԻ

ՀԱՆԴԻՍԻ

Վարկեմական Տպագրութիւն

ԱՅՑԵՏՈՄՍԻ

100 հատը 2 ֆր. կը տպագրուի եւ մօր տուփին մէջ կը ցանուի Այցեւորման գործնածաթեան հրահանգը պարունակող տէտրածը, որուն կողքին վրայ այցեւորման տիրոջ նունը տպագրուած պիտի ըլլայ։ Դիմել խմբագրութեան։ Քաղաքներէ ըլլալիք յանձնարարութեան թղթատարի ծախք 30 սանդիմ-յաւանարարողին վրայ է։ Դրամի փոխարէն Պուլկարական 5, 10 եւ 15 սանդիմնոց նաւակաւորօշմ կ'ընդունուի։ Կանխիկ։

ԻՐԲԵՅԻՆ ՖԷՆՏԻ

ԳԱՐԸՅԸ ԵՖԷՆՏԻ

Կը կէճէլէրինէ մախտուս զայէթ կիւլլահնի վէ էյլէնէլի իշպու գամէտի 32 սահիֆէնէն իպարէթ օլուպ, հրուֆաթը էրմէնիճէ վէ լիսանը թիւրքօն օլարազ Վարնատա թիւթիւնիւ տիւքքեանլարընտա 30 սանթիմ ֆիաթլէ սաթըլմագտա տըր։ Թաչրալարտան իսթէյէնլէր եալընըզ 30 սանթիմլիք բօսթա բուլը զիրտէ մուհարրէր նամըմա կիօնտէրմէլի տիրլէր։

Մ. ԽԱԶԻԿԵԱՆ, 2 նճի Ուշաթ, 1104

Վ. Ա. Ռ. Ն. Ա.

Պուշտան պէօյլէ սաիր էյլէնէլի վէ ֆախտէլի գամէտլէր տախի բէյաէրէյ նէշր օլունաճաղը պէյան օլունըր։

Отговоренъ редакторъ: Н. Драгулев

Печатница „Взаимность“—Варна